

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱ ԳԱԳԻԿԻ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04. - «Դատավարական իրավունք - դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРА ГАГИКОВИЧ ЗОГРАБЯН

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ СРЕДСТВ ДОКАЗЫВАНИЯ В ГРАЖДАНСКОМ
ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.04- “Судебное право-судоустройство, гражданский
процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза,
адвокатура, теория оперативно-розыскной деятельности”

ЕРЕВАН-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Գլաձոր համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Գ. Պետրոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Տ. Ալիև
	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ.Վ. Հովհաննիսյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հուլիսի 12-ին, ժամը 13⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ.-ի հունիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտությունների դոկտոր, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском университете “Гладзор”

Научный руководитель: доктор юридических наук
профессор Р.Г. Петросян

Официальные оппоненты: доктор юридических наук
профессор Т.Т. Алиев

кандидат юридических наук
доцент В.В. Оганнисян

Ведущая организация: Академия управления РА

Защита состоится 12-ого июля 2013 г. в 13⁰⁰ часов, на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11 июня 2013 г.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент

А.Г. Вагаршян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Քաղաքացիական դատավարությունում, ինչպես ընթացակարգային իրավունքի մյուս ճյուղերում՝ քրեական, վարչական, սահմանադրական դատավարություններում, դատարանի խնդիրն է քաղաքացիական գործերի ճիշտ և արագ քննությունն ու լուծումը: Նախքան սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի գոյության մասին եզրակացության՝ ներքին հանգմունքի հանգելը դատարանը պետք է հաստատի այն փաստերը (հանգամանքները), որոնք ընկած են սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների հիմքում: Այդ նպատակով գործին մասնակցող անձինք և դատարանը պետք է ապացուցողական գործունեություն ծավալեն՝ ձեռք բերեն, ներկայացնեն, հետազոտեն և գնահատեն սուբյեկտիվ իրավունքի հիմքում ընկած փաստերը հաստատող կամ ժխտող ապացույցներ: Այս իմաստով դատական ապացույցները և ապացուցման ինստիտուտը ցանկացած երկրի քաղաքացիական դատավարության իրավունքի կենտրոնական ինստիտուտներից է:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ նաև ՀՀ) քաղաքացիական դատավարության իրավունքը վերապրում է բարեփոխումների բարդ փուլ: 1998թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.09.09/20(53): Այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ կամ Օրենսգիրք) և դրա հետագա փոփոխությունները հիմք դրեցին Հայաստանում քաղաքացիական դատավարության նոր մոդելի ներմուծմանը, որի արդյունքում քաղաքացիական դատավարության իրականացման հիմքում դրվեցին մրցակցության և տնօրինչականության սկզբունքները: Դատավարության հիմնական սկզբունքների որակական փոփոխություններից մեկը դատավարությունում մրցակցության և տնօրինչականության սկզբունքների ազդեցության ընդլայնումն էր, որն ապացույցների հավաքման գործընթացում գրեթե բացառեց դատարանի մասնակցությունը: Ինչո՞ւ գրեթե, որովհետև գործող ՔԴՕ-ն հնարավորություն է տալիս դատարանին իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել, վկա ներգրավել, իսկ գործին մասնակցող անձին իրավունք է տալիս դիմել դատարանի օգնությանը միայն այն դեպքում, երբ նա հնարավորություն չունի ապացույցն ինքնուրույն ձեռք բերել և դատարան ներկայացնել:

Մրցակցության ու տնօրինչականության սկզբունքների գործողության ընդլայնումը քաղաքացիական դատավարությունում հիմք է հանդիսացել ապացույցների հավաքման և ներկայացման պարտականությունը գլխավորապես գործին մասնակցող անձանց միջև բաշխելու համար: Այդ տեսանկյունից, կարևոր նշանակություն է ձեռք բերում ապացուցման միջոցներից յուրաքանչյուրի հասկացության և հատկանիշների հստակ բացահայտումը և դրանց ձեռքբերման, հետազոտման ու գնահատման դատավարական կարգի ըմբռնումը՝ ուշադրության կենտրոնում պահելով քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիքների հավասարակշռությունը:

Ապացուցումը դատական գործունեության ամենադժվարին մասն է, քանի որ այն կապված է անցյալ ժամանակի իրադարձությունների հետ, որոնք ենթակա են ճիշտ վերարտադրման: Ապացույցների հասկացությունը ապացույցների տեսության հիմնական (ելակետային) տարրն է: Դրա բովանդակության մեջ ներառ-

վող հասկացությունն էականորեն ազդում է քաղաքացիական դատավարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների սահմանման վրա և անմիջականորեն կապված է այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են ապացուցման առարկան, ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը, ապացույցների հետազոտությունը և գնահատումը: Ապացույցների ձեռքբերման և հետազոտության օրենքով սահմանված կարգի պահպանումը, ապացույցների հասկացության ճիշտ սահմանումը ապահովում են նաև վճիռների օրինականությունը և հիմնավորվածությունը:

Մշտապես զարգացող քաղաքացիա-դատավարական օրենսդրությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դատական պրակտիկայի առաջընթացը պահանջում են քաղաքացիական դատավարությունում ապացուցման միջոցների օրենսդրական կարգավորումների անընդհատ վերանայում և կատարելագործում՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան երկրների իրավունքի և պրակտիկայի առանձնահատկությունները և դրա հնարավոր ազդեցությունը ազգային իրավունքի համապատասխան ինստիտուտների վրա: Այդ իսկ պատճառով ժամանակակից պայմաններում ապացուցման միջոցների ուսումնասիրությունը քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ հրատապ և անհետաձգելի է՝ գիտականորեն հիմնավորելու համար համապատասխան զարգացումների տրամաբանությունն ու էությունը:

Ավելին, ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց մեծանում են գիտության և տեխնիկայի նվաճումներն արդարադատության իրականացման գործընթացում արդյունավետ կիրառելու հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ գիտատեխնիկական նոր նվաճումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ու համակարգչային տեխնիկայի կատարելագործմանը և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, ձևավորվում և զարգանում են նաև ապացույցների նոր աղբյուրներ: Նշվածով է պայմանավորված ապացուցման նոր կրիչները՝ որպես ապացույցի թույլատրելի աղբյուրներ կիրառելու հարցի արդիականությունը քաղաքացիական դատավարությունում:

Ամփոփելով վերոգրյալը կարծում ենք, որ թեմայի արդիականությունը և հրատապությունը պայմանավորված է հիմնականում հետևյալ գործոններով՝

1. Թեմայի հրատապությունը պայմանավորված է նաև իրավական բացով, որն այսօր առկա է հենց ապացուցման ինստիտուտում: Ինչպես արդեն նշել ենք ապացույցների ինստիտուտը այն կարևորագույն ինստիտուտն է, որը կանխորոշում է քաղաքացիական դատավարությունում գործի ելքը, ուստի հենց այս ոլորտում իրավական բացերի լրացումն է այն երաշխիքը, որը հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին օգտվել իրենց խախտված իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունից՝ ակնկալելով արդար և օրինական դատական ակտի կայացում: Օրինակ՝ այսօր դատարանը չունի իրավական հնարավորություն նշանակել փորձաքննության անցկացման ժամկետ և պատասխանատվություն սահմանել այդ ժամկետը խախտելու համար: Նման պայմաններում գործնականում փորձաքննություն նշանակելու դեպքում գործի վարույթը կասեցվում է անորոշ և շատ հաճախ բավականին տևական ժամանակահատվածով: Նման իրավական բացի պայմաններում մասսայաբար խախտվում են դատավարության մասնակիցների՝ ողջամիտ ժամկետում գործի քննության ի-

րավունքը, որի համար ոչ մի սուբյեկտ պատասխանատվության չի ենթարկվում: Այսպիսի օրինակները բազմաթիվ են:

2. Ընտրված թեման արդիական է նաև Հայաստանի Հանրապետությունում ձևավորված դատական պրակտիկան հաշվի առնելով: Գաղտնիք չէ, որ այսօր գործին մասնակցող անձի ներկայացուցչին շատ դատավորներ ընկալում են որպես ցուցմունք տվող սուբյեկտի և պահանջում վերջիններից ստորագրել քրեական պատասխանատվության մասին ծանուցման թերթիկը: Չնայած այս մասով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման առկայությանը, մինչև այս պահին դատական պրակտիկան միասնական մոտեցում չի շարունակում ցուցաբերել կողմի ներկայացուցչի բացատրությանը: Ռուստի ձևավորված դատական պրակտիկան թելադրում է օրենսդրական բարելավումների անհրաժեշտություն, որին ծառայելը գիտության հիմնական առաքելությունն է:

3. Ատենախոսության թեման արդիական է նաև զուտ գիտական տեսանկյունից: Այսօր ոչ օրենսդիրը և ոչ էլ հայրենական դատավարագիտությունը չեն սահմանում բացատրության բնորոշումը, ինչի արդյունքում ցուցմունքի և բացատրության միանգամայն տարբեր ինստիտուտներ անարդարացիորեն միաձուլվում են՝ ստեղծելով և իրավական, և՛ գիտական անորոշություն:

Նմանապայմաններում ապացուցման միջոցների տեսակներից յուրաքանչյուրի դերի և նշանակության վերանայումը և ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքում ապացուցման իրավունքի տեսության կատարելագործումն արդիական է ու հրատապ՝ քաղաքացիական գործերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության և մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորման նկատառումներից ելնելով:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը. Ատենախոսության թեմայի վերաբերյալ այս համատեքստով մենագրական բնույթի ուսումնասիրություններ չեն կատարվել: Հետազոտության թեմային առնչվող որոշ հարցերի վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարվել Ռ.Գ. Պետրոսյանի, Ա.Գ. Դավթյանի, Ա.Ֆ. Կլեյմանի և այլոց կողմից, ինչպես նաև պաշտպանվել են թեկնածուականատենախոսություններ՝ «Տեսաձայնագրառումը և ձայնագրառումը քրեական դատավարությունում» (Արագյան Լ.Ռ., 2000թ.), «Ապացույցները Լատինական Ամերիկայի երկրների քաղաքացիական դատավարությունում» (Երմակովա Ե.Պ. 2000թ.), «Համակարգչային տեղեկատվությունը որպես ապացույցի միջոց Ռուսաստանի քրեական դատավարությունում» (Զիգուրա Ն.Ա., 2012թ.) և այլն:

Հայաստանի Հանրապետությունում խնդրի բազմակողմանի և գիտական հետազոտություն տվյալ համատեքստում չի իրականացվել: Սույն աշխատանքը կոչված է լրացնել առկա բացերը:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել իրավագիտության դոկտոր, պրոֆեսորներ Ռ.Գ. Պետրոսյանի և Ա.Հ. Դավթյանի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության իրավունքի և մյուս գիտությունների գիտնականների հիմնական աշխատությունները:

Ատենախոսության մեջ քննարկված այնպիսի հարցերի ուսումնասիրության համար, որոնք, մասնավորապես, վերաբերում են ապացուցման պարտականությանը, դրա բովանդակությանը, ապացուցման պարտականությունը բաշխելուն և ապացուցելուց ազատելուն, տեսական հիմքեր են ծառայել իրավագիտության թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյանի աշխատությունները:

Ատենախոսության մեջ դատական փորձաքննությունների և փորձագետի եզրակացությանն առնչվող մի շարք հարցեր քննարկելիս օգտագործվել են հայ իրավագետներ Լ.Պ. Օհանյանի, Վ.Գ. Ենգիբարյանի, Ա.Ս. Չախոյանի, Ա.Հ. Դավթյանի, Լ.Դ. Դավթյանի և այլոց աշխատություններում տեղ գտած դրույթները:

Օգտագործվել են նաև ռուսական քաղաքացիա-դատավարական գրականության մի շարք աղբյուրներ, այդ թվում՝ Ա.Գ. Կովալենկոյի, Ա.Ա. Էյսմանի, Ա.Ա. Վլասովի, Ա.Ի. Վինբերգի, Ա.Ռ. Ամերխանովայի, Ա.Տ. Բոնների, Ա.Ֆ. Կլեյնմանի, Ի.Ռ. Մեդվեդևի, Ի.Վ. Ռեշետնիկովայի, Ի.Ն. Լուկյանովայի, Ռ.Ս. Բելկինի, Ս.Օ. Նիկոլանի, Վ.Ա. Նովիցկու, Կ.Ս. Յուդելսոնի, Տ.Վ. Ավերյանովայի, Վ.Կ. Պուչինսկու, Տ.Վ. Սախնովայի, Վ.Վ. Մուլչանովի, Ե.Ա. Պլեշկինի, Մ.Ա. Ֆոկինայի, Ե.Պ. Երմակովայի, Ե.Ռ. Ռոսսինսկայայի, Մ.Վ. Գորելովի, Մ.Մ. Տրեուշնիկովի, Ն.Ա Սելիվանովի, Ն.Մ. Կորշունովի, Յու.Լ. Մարեևի և գիտնականների աշխատությունները:

Որպես ատենախոսության տեսական հիմքեր՝ օգտագործվել են նաև մի շարք արտասահմանյան հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են՝ Խ. Սյանը, Զ.Ռ. Լուիսը, Պ. Մուրֆին, Ռ. Գլովերը, Յ.Ֆ. Նիջբոերը, Ռու.Զ. Սպրանգերսը, Ֆ.Տ. Կիելին և ուրիշներ:

Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտ է հանդիսանում ապացույցների առանձին տեսակները (ապացուցման միջոցները)՝ որպես քաղաքացիական դատավարության կենտրոնական ինստիտուտ:

Ատենախոսության ուսումնասիրման առարկա է հանդիսանում ապացուցման առանձին միջոցներից յուրաքանչյուրի՝ գործին մասնակցող անձանց և վկաների ցուցմունքների, գրավոր և իրեղեն ապացույցների, փորձագետի եզրակացության հասկացությունը, հատկանիշները և հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրության համապատասխան նորմերը:

Ատենախոսությամբ հետազոտվել են նաև ապացուցման թվարկված միջոցներից յուրաքանչյուրի ձեռքբերման (հավաքման), հետազոտման և գնահատման հետ առնչվող հիմնահարցերը, ինչպես նաև քննարկման առարկա է դարձվել դրանց ապացուցողական նշանակությունը քաղաքացիական գործերի քննության և լուծման գործընթացում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Ատենախոսության նպատակը քաղաքացիական դատավարությունում ապացույցների կոնկրետ տեսակների տեսական և գիտագործնական հետազոտությունն է՝ ՀՀ օրենսդրության կատարելագործմանն ու դատական պրակտիկայի զարգացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելու համար: Այս առումով նպատակ է դրվում վերանայել և կատարելագործել ապացուցման իրավունքի տեսական հիմքերը քաղաքացիական դատավարության իրավունքում և փորձել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ անել առկա հիմնահարցերի արդյունավետ լուծման ուղղությամբ:

Առաջադրված նպատակներին հետամուտ՝ հեղինակն աշխատանքում լուծում է հետևյալ խնդիրները.

ա) հստակեցնել (վերանայել) ՀՀ քաղաքացիական դատավարությունում ապացուցման յուրաքանչյուր միջոցի հասկացությունը, հատկանիշները, ձեռքբերման, հետազոտման և գնահատման դատավարական կարգը և նշանակությունը քաղաքացիական գործերի քննության և լուծման գործընթացում,

բ) բացահայտել ՀՀ քաղաքացիական դատավարությունում ապացուցման յուրաքանչյուր միջոցի իրավական կարգավորման և համապատասխան իրավադրույթների կիրառման հետ կապված առանցքային հիմնախնդիրները,

գ) օտարերկրյա պետությունների, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնության, Անգլիայի, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Լատինական Ամերիկայի և Ֆրանսիայի իրավունքում ապացույցների տեսակների հետ կապված իրավական կարգավորումների ուսումնասիրության արդյունքների հիման վրա քննարկել այդ պետությունների առաջադեմ փորձը ՀՀ-ում կիրառելու հնարավորությունները,

դ) վերանայել ՀՀ քաղաքացիա-դատավարական օրենսդրության մեջ, դատական պրակտիկայում և քաղաքացիական դատավարության իրավունքի գիտությունում ապացուցման միջոցների դասակարգումը և այդ համակարգում ապացույցներից յուրաքանչյուրի տեղն ու դերը,

ե) վերլուծել ապացուցման միջոցների առանձին տեսակների ձեռքբերման, հետազոտման և գնահատման գործընթացում մարդու իրավունքների պաշտպանության և գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության երաշխիքները և լուծումներ առաջարկել առկա հիմնախնդիրների որոշակիացման ուղղությամբ:

Հետազոտության նորմատիվ հիմք են ծառայել ՀՀ Սահմանադրությունը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ դատական օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քրեական օրենսգիրքը, «Նոտարիատի մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Իրավական ակտերի մասին», «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքները և այլ օրենքներ ու իրավական ակտեր: Օգտագործվել են նաև Հռոմի 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի մի շարք դրույթներ, ՄԻԵԴ որոշումներ, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ և այլն:

Հետազոտությունն իրականացվել է նաև մի շարք արտասահմանյան երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Անգլիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Լատինական Ամերիկայի որոշ երկրների (Պանամա, Էկվադոր, Կոլումբիա) քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների համեմատական ուսումնասիրության ճանապարհով:

Հետազոտության փորձառական (էմպիրիկ) հիմքերը. Ատենախոսությամբ ներառված հարցերին առնչվող մի շարք փորձառական (էմպիրիկ) նյութեր, այդ թվում՝ ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների վճիռներ, դատավճիռներ և որոշումներ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ արդարադատության խորհրդի, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումներ, քաղաքացիական, վարչական գործերի և փորձագիտական վարույթների նյութեր, փորձագիտական եզրակացություններ, ինչպես նաև օտարերկրյա դատական ատյանների և ՄԻԵԴ-ի կողմից կայացված դատական ակտեր և այլ նյութեր:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր՝ դիալեկտիկական, տրամաբանական, քննա-

կան-վերլուծական, այնպես էլ մասնավոր մեթոդները՝ համեմատախրավական, ձևական-իրավաբանական, համակարգային կառուցվածքային վերլուծության, դոկտրինալ մեկնաբանման և այլն:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ ՀՀ-ում քաղաքացիական դատավարական իրավունքի գիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում ներկայացրել այնպիսի նոր ինստիտուտներ, ինչպիսիք են դատարանի կողմից փորձաքննության անցկացման ժամկետ սահմանելը, գործի մասնակցող անձանց և վկաների կողմից ցուցմունք տալուց առաջ երդում տալը, գրավոր ապացույցները նոր դասակարգման ենթարկելը, նորովի մոտեցում է ցուցաբերվել փորձագետ նշանակվող անձի համար սահմանված պահանջներին և այլն:

Հետազոտությամբ համալիր կերպով ուսումնասիրվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված ապացուցման միջոցներն ամբողջությամբ, վերանայվել է ապացուցման միջոցների դասակարգումը և փորձ է արվել նորովի ներկայացնել դրանց կապն ու հարաբերակցությունը: Ատենախոսությունը բովանդակում է նաև մի շարք առաջադեմ դրույթներ ապացուցման գործընթացում ապացույցների առանձին տեսակների տեղի և նշանակության վերաբերյալ:

Որպես նորույթ են բնութագրվում նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Քաղաքացիական դատավարությունում օրենսդիրը նախկինում ապացուցման միջոց համարվող գործի մասնակցող անձի «բացատրություն» հասկացությունը փոխարինելով գործին մասնակցող անձի «ցուցմունք» հասկացությամբ, այնուամենայնիվ ՔԴՕ-ում կիրառում է «բացատրություն» հասկացությունը, որը չի հանդիսանում ապացուցման միջոց: ***Հետևաբար առաջարկվում է սահմանել բացատրության հետևյալ բնորոշումը՝ «բացատրությունը գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած պարզաբանումն է գործի փաստերի և/կամ իրավունքի վերաբերյալ: Բացատրությունը ապացույց (ապացուցման միջոց) չի հանդիսանում:»:***

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՀՀ ՔԴՕ 28-րդ հոդվածը լրացնել վերոհիշյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով:

2. Քաղաքացիական դատավարությունում գործին մասնակցող անձի և վկայի կողմից ցուցմունք տալուց առաջ նախատեսվում է միայն նախազգուշացում սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին, որը ոչ միշտ է արդյունավետ միջոց ծառայում տվյալ սուբյեկտների կողմից ճիշտ ցուցմունք տալն ապահովելու համար: ***Հետևաբար առաջարկվում է նախատեսել ցուցմունք տալուց առաջ երդում տալու պարտականություն գործունակ վկայի և գործին մասնակցող անձի համար, բացառությամբ կրոնական կամ այլ համոզմունքների պատճառով երդվել չցանկացող անձանց՝ համարժեք այլ հայտարարություն անելու պայմանով:***

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՀՀ ՔԴՕ-ն լրացնել «Գործին մասնակցող անձի և վկայի կողմից ցուցմունք տալուց առաջ երդում տալը» վերնագրով 64.1-րդ հոդվածով՝ սահմանելով երդման բովանդակությունը և կարգը:

3. Քաղաքացիական դատավարությունում օրենսդիրը հստակ չի տարանջատել գործին մասնակցող անձին ու նրա ներկայացուցչին ցուցմունք տալու հարցում, ինչի հետևանքով պրակտիկայում ներկայացուցիչը ցուցմունք է տալիս

գործին մասնակցող անձի փոխարեն, իսկ դատարանն էլ ընդունում է այդ ցուցմունքը, որպես ապացույց: *Հետևաբար առաջարկվում է սահմանել, որ գործին մասնակցող անձանց ներկայացուցիչները չեն կարող ցուցմունք տալ իրենց վստահորդների փոխարեն:*

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՀՀ ՔՂՕ 64-րդ հոդվածը լրացնել վերոհիշյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով:

4. Քաղաքացիական դատավարությունում, որպես գրավոր ապացույցներ օգտագործվում են ինչպես վարչական ակտերը, այնպես էլ մասնավոր փաստաթղթերը, որոնք առկա իրավական կարգավորման պայմաններում ունեն նույն իրավաբանական ուժը: Նման պայմաններում, չի ընդգծվում հանրային փաստաթղթերի դերն ու նշանակությունը, ինչպես նաև այն փաստերի շրջանակը, որոնք կարող են ապացուցվել բացառապես հանրային փաստաթղթերով: *Ուստի առաջարկվում է գրավոր ապացույցները դասակարգել հանրայինի և մասնավորի՝ հանրային համարելով պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի (այդ թվում՝ վարչական մարմնի) կամ դրանց պաշտոնատար անձի, ինչպես նաև հանրային ծառայություններ իրականացնող անձի կողմից իր լիազորությունների իրականացման սահմաններում տրված այն փաստաթուղթը, որը պարունակում է այդպիսի փաստաթղթի համար օրենքով նախատեսված անհրաժեշտ վավերապայմանները, իսկ մասնավոր համարելով հանրային չհանդիսացող մյուս գրավոր ապացույցները:*

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՀՀ ՔՂՕ-ն լրացնել «Գրավոր ապացույցների դասակարգումը» վերնագրով 54.¹ հոդվածով՝ սահմանելով հանրային և մասնավոր ապացույցների բնորոշումը, տեսակները և դրանց ապացուցողական ուժը:

5. Քաղաքացիական դատավարությունում լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները ներառված են իրեղեն ապացույցների կազմում, ինչը չի համապատասխանում այդ ապացույցների բնույթին, քանի որ վերջիններս ունեն և իրեղեն և անձնական ապացույցներին բնորոշ տարրեր: *Ուստի առաջարկվում է լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրություններն առանձնացնել իրեղեն ապացույցներից՝ դրանք դիտարկելով որպես ինքնուրույն ապացուցման միջոցներ:*

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՀՀ ՔՂՕ 47-րդ հոդվածի 1-ին մասում ապացույցների ցանկը լրացնել լուսանկարներով, ձայնագրություններով և տեսագրություններով, ինչպես նաև ՀՀ ՔՂՕ-ն լրացնել «Լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները» վերնագրով 59¹ հոդվածով՝ սահմանելով լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների ներկայացման, թույլատրելիության, հետազոտման և, պահպանման հետ կապված հարաբերությունները:

6. Քաղաքացիական դատավարությունում սահմանված չեն փորձաքննություն նշանակելու համար անհրաժեշտ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի բնագավառները, ինչի արդյունքում գործնականում տարընկալումներ են առաջանում փորձաքննության ինստիտուտը կիրառելիս: *Ուստի առաջարկվում է սահմանել, որ փորձաքննություն կարող է նշանակվել գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ բնագավառում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով:*

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՔԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

7. Քաղաքացիական դատավարությունում փորձաքննության կատարման ժամկետ չի նախատեսվում, ինչի արդյունքում անհարկի խախտվում է ողջամիտ ժամկետում դատական քննության իրականացման պահանջը: *Ուստի առաջարկվում է նախատեսել դատարանի իրավասությունը՝ սահմանել փորձաքննության իրականացման ժամկետ և պատասխանատվության ենթարկել այդ ժամկետը խախտող փորձագետին:*

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՔԴՕ 60-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել լրացում նախատեսելով նաև փորձաքննությունը սկսելու և ավարտելու ժամկետները սահմանելու դատարանի իրավասությունը, ինչպես նաև ՀՀ ՔԴՕ 61.¹ հոդվածը լրացնել 7-րդ մասով, սահմանելով նաև փորձաքննությունը ժամանակին չիրականացնող փորձագետի նկատմամբ տուգանք նշանակելու չափը և կարգը:

8. Քաղաքացիական դատավարությունում փորձագետ կարող է նշանակվել միայն համապատասխան որակավորում ունեցող անձը, այնինչ նման իրավական կարգավորումն անհարկի նեղացնում է արհեստի կամ արվեստի բնագավառում փորձաքննություն նշանակելու դատարանի իրավասությունը: *Ուստի առաջարկվում է սահմանել, որ դատարանում, որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում, կրթություն, ունակություն, հմտություն կամ փորձ ունեցող գործունակ ֆիզիկական անձը:*

Այս առաջարկի իրագործման համար անհրաժեշտ է ՔԴՕ 45-րդ հոդվածի 1-ին մասում կատարել համապատասխան փոփոխություն:

Ատենախոսության տեսական նշանակությունը ապացույցների տեսակների՝ որպես քաղաքացիական դատավարության իրավունքի կենտրոնական ինստիտուտներից մեկի համալիր ուսումնասիրության արդյունքում դրա վերամշակումն ու կատարելագործումն է: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումները, եզրահանգումներն ու առաջարկությունները համալրում են քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության և ապացույցների տեսության գիտական ներուժը: Ատենախոսությունը, լինելով հայրենական գիտությունում ապացուցման միջոցներին վերաբերող համակողմանի, համալիր ուսումնասիրություն, կարող է հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Այն նոր նախադրյալներ է ստեղծում նորովի ուսումնասիրելու ապացուցման միջոցների հասկացությունը, դերն ու նշանակությունը քաղաքացիական դատավարությունում և ապացուցման իրավունքի տեսության մեջ:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ դրանում արված եզրահանգումները և առաջարկությունները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության բնագավառում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործման համար: Ատենախոսության մեջ քննարկված հարցերը և դրանց լուծմանն ուղղված տեսական առաջարկները կարող են նշանակություն ունենալ նաև ՀՀ դատական և փորձագիտական պրակտիկայում՝ ապացուցման առանձին միջոցների ձեռքբերման, հետազոտման և գնահատման գործընթացում: Բացի այդ, հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական նպատակներով՝ «Քաղաքացիական դատավարության իրավունք», «Ապացուցման իրավունքի տեսություն» և այլ ի-

րավաբանական դասընթացների դասավանդման ժամանակ, ինչպես նաև ուսումնական, մեթոդական և գիտական գրականության նախապատրաստման ժամանակ: Ատենախոսության նյութը կարող է հետաքրքրություն ներկայացնել ասպիրանտների, իրավագիտության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ու պրակտիկ իրավաբանների, ներառյալ՝ փաստաբանների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի Գլաձոր համալսարանի իրավագիտության ամբիոնում, որտեղ քննարկվել և գրախոսվել է: Ատենախոսության հիմնական դրույթները, հետևությունները և առաջարկությունները արտացոլվել են հեղինակի՝ 2008-2011թթ. հրապարակումներում, ինչպես նաև վերը նշված հաստատությունում կարդացած զեկուցումներում: Բացի այդ, հետազոտության ընթացիկ և հիմնական արդյունքներն ատենախոսի կողմից օգտագործվել են նաև իր երկարամյա փաստաբանական գործունեության մեջ:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը. Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Ատենախոսությունը կատարված է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից սահմանված ծավալով և կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են յոթ պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ու գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են դրա մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, մեթոդաբանական, նորմատիվ և փորձառական հիմքերը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվում է ատենախոսության գիտական նորույթը և ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ներածության մեջ շարադրված են նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, դրա արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը վերնագրված է՝ «Ցուցմունքները որպես ապացուցման միջոցներ քաղաքացիական դատավարությունում» և բաղկացած է երեք պարագրաֆներից: Առաջին գլխում ներկայացված է ցուցմունքի՝ որպես ապացուցման միջոցի ինստիտուտը և վերջինիս տեսակները:

Առաջին գլխի առաջին՝ «Գործին մասնակցող անձանց ցուցմունքների և բացատրության հասկացությունը. տարբերակիչ գծերը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ պարագրաֆում՝ ատենախոսը, գործին մասնակցող անձի ցուցմունքի և բացատրության էության, դրանց առանձնահատկությունների և ապացուցողական ուժի բացահայտման տեսանկյունից էլնելով, ներկայացրել է գործին մասնակցող անձի ցուցմունքի տարբերակիչ հատկանիշները:

Նույն պարագրաֆում հեղինակն անդրադարձել է «ցուցմունքի» և «բացատրության» ինստիտուտների սահմանություններին և տարբերություններին՝ նկատելով, որ 2007թ. նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47

հողվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում՝ «գործին մասնակցող անձանց բացատրություններով» ձևակերպումը փոխարինվել է «գործին մասնակցող անձանց ցուցմունքներով»: Այսինքն՝ ի տարբերություն նախկին կարգավորման՝ ներկայումս ապացուցման միջոց են հանդիսանում ոչ թե գործին մասնակցող անձանց բացատրությունները, այլ՝ նրանց ցուցմունքները: Հեղինակը նկատել է նաև, որ վերը նշված փոփոխությունից հետո անհետևողականորեն ՀՀ ՔԴՕ մի շարք հողվածներում պահպանվել են գործին մասնակցող անձանց բացատրությունների վերաբերյալ դրույթները, ինչի արդյունքում անհասկանալի է մնում բացատրության էությունը քաղաքացիական դատավարությունում և դրա տարբերությունն ապացուցման մյուս միջոցներից՝ մասնավորապես, ցուցմունքներից:

«Ցուցմունքի» և «բացատրության» ինստիտուտների մեկնաբանման համատեքստում հեղինակը նշել է, որ՝ բացատրությունը կողմի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած պարզաբանումներն են գործի փաստերի և/կամ իրավունքի վերաբերյալ: Բացատրությունն ապացուցման միջոց չի հանդիսանում:

Այս պարագրաֆի շրջանակներում հեղինակն անդրադառնում է նաև երդման ինստիտուտին՝ ներկայացնելով վերջինիս պատմական ակունքները, ինչպես նաև անդրադառնալով այն երկրների փորձին, որտեղ անձը ցուցմունք տալուց առաջ պարտավորվում է երդվել: Ատենախոսն անդրադառնում է նաև այն գիտնականների մոտեցումներին, որոնք կարծում են, որ երդումն ավելի գործուն միջոց է ցուցմունքի ճշմարտացիությունն ապահովելու համար, քան նախազգուշացումը քրեական պատասխանատվության մասին:

Երդման ինստիտուտի համատեքստում հեղինակը կարծում է, որ ճիշտ կլինի, եթե քաղաքացիական դատավարությունում չափահաս գործին մասնակցող անձը ցուցմունք տալուց առաջ երդվի կամ համարժեք այլ հայտարարություն անի, եթե իր կրոնական կամ այլ համոզմունքների պատճառով չի ցանկանում երդվել:

Առաջին գլխի երկրորդ՝ «խոստովանությունը և գործին մասնակցող անձի ներկայացուցչի «ցուցմունքը» որպես ապացուցման միջոց» վերտառությամբ պարագրաֆում ատենախոսն անդրադառնում է խոստովանությանը, որպես գործին մասնակցող անձանց ցուցմունքների տեսակի:

Անդրադառնալով ձևավորված դատական պրակտիկային հեղինակը նկատել է, որ չնայած խոստովանության ինստիտուտի իրավական կարգավորման բացակայությանը, այն այնուամենայնիվ ունի գործնական կիրառություն: Մասնավորապես՝ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու ժամանակ դատարանը, պարզելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, միաժամանակ դրանք վկայակոչած կողմի հետ ճշտում է դրանց հիմքում ընկած ապացույցները, ինչպես նաև այդ փաստը գործին մասնակցող մյուս անձի կողմից ընդունելի կամ ոչ ընդունելի լինելը: Բնականաբար, լինում են փաստեր, որոնք երկու կողմի համար էլ ընդունելի են և ապացուցման կարիք չունեն, որպիսի պարագայում, անշուշտ, գործ ունենք խոստովանության հետ:

Նման պայմաններում հեղինակն առավել արդյունավետ է համարում, որ ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ ՔԴՕ-ով պարտադրված լինի խոստովանության ընդունման կամ մերժման մասին կայացնել միջանկյալ դատական ակտ:

Նշված դատական ակտը կայացնելիս դատարանն ինքն այդ փաստը չի անտեսի, և փաստը կհամարվի ապացուցված:

Այս պարագրաֆում հեղինակն անդրադառնում է նաև այնպիսի կարևոր ինստիտուտներին, ինչպիսիք են *գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների ցուցմունքները և դրանց ապացուցողական նշանակությունը*:

Ուսումնասիրելով գործող օրենսդրությունը և ձևավորված դատական պրակտիկան՝ հեղինակն արձանագրել է, որ թեև ՀՀ ՔԴՕ-ն իր մի շարք հոդվածներով գործին մասնակցող անձի ներկայացուցչի «ցուցմունքները» չի համարում ապացույց, այնուամենայնիվ, ՀՀ դատական պրակտիկայում, ապացույցների հետազոտման ժամանակ որպես «գործին մասնակցող անձանց ցուցմունքներ» հետազոտվում և գնահատվում են գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների «ցուցմունքները» նույնպես: Անթույլատրելի համարելով նման դատական պրակտիկայի կայացումը՝ հեղինակը բերել է օրինակներ, երբ դատարանը փաստի ապացուցման հիմքում դրել է ընդամենը գործին մասնակցող անձի ներկայացուցչի ցուցմունքը:

Ավելի պատկերավոր դարձնելով գործին մասնակցող անձի ներկայացուցչի ցուցմունքը ապացույց համարելու շատ դատարանների կողմից կիրառվող մոտեցումը՝ հեղինակը գործին մասնակցող անձին համեմատում է վկայի հետ՝ արձանագրելով, որ այդ նույն մոտեցմամբ առաջնորդվելով նաև վկան կարող է փաստի մասին ցուցմունք տալ ներկայացուցչի միջոցով:

Ատենախոսը քննադատում է նաև գործին մասնակցող անձի ներկայացուցչին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու հետ կապված դատարանների մոտեցումը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ներկայացուցչի ցուցմունքն ապացույց չի համարում, ինչից հետևում է, որ ներկայացուցիչը ցուցմունք տալու սուբյեկտ չի հանդիսանում, այդուհանդերձ, դատարանները շարունակում են գործին մասնակցող անձանց ներկայացուցիչներին նախազգուշացնել սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին: Հեղինակը ներկայացուցչի ցուցմունքն անթույլատրելի համարելու իր դիրքորոշումը փորձել է հիմնավորել նաև քրեական պատասխանատվության ենթարկելու ժամանակ ծագող խնդիրներով: Երբ գործին մասնակցող անձը, որն անմիջական տեղեկատվության կրողն է, սուտ տեղեկություն է հաղորդում իր ներկայացուցչին, իսկ ներկայացուցիչն էլ այդ սուտը վերարտադրում է դատարանում՝ օբյեկտիվորեն չիմանալով, որ սուտ ցուցմունք է տալիս, ապա սուտը բացահայտվելուց հետո ո՞վ պետք է պատասխանատվության ենթարկվի՝ գործին մասնակցող անձը, որը ցուցմունք չի տվել, թե՞ գործին մասնակցող անձի ներկայացուցիչը, որը բարեխղճորեն իրեն հայտնի դարձածը հաղորդել է դատարանին: Ակնհայտ է, որ նկարագրված դեպքերում գործին մասնակցող անձի ներկայացուցիչը ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ նա չի հանդիսանում սուտ ցուցմունք տալու հանցակազմի սուբյեկտ: Բացի այդ, նկարագրված իրավիճակում բացակայում է նաև հանցակազմի սուբյեկտիվ կողմը:

Ուստի, դատական պրակտիկայում տարակարծություններից խուսափելու և օրենսդրական հստակության ապահովման նպատակով հեղինակն առաջարկում է ՀՀ ՔԴՕ-ում սահմանել, որ գործին մասնակցող անձանց ներկայացուցիչները չեն կարող ցուցմունք տալ իրենց վստահորդների փոխարեն:

Առաջին գլխի երրորդ՝ «Վկայի ցուցմունքը՝ որպես ապացուցման միջոց քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ պարագրաֆում հեղինակն անդրադարձել է վկայի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններին, պայմանավորված այն հանգամանքով, որ վկան հանդիսանում է փաստերի մասին տեղեկատվություն կրող՝ ապացույցի աղբյուր, և միաժամանակ դատավարության մասնակից՝ դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտ:

Հեղինակն առանձնացնում է վկայի դատավարական կարգավիճակի հետևյալ առանձնահատկությունները՝

1. Նախ, վկան կրում է դատավարական պարտականություններ (ներկայանալ դատարանի կանչով, տալ ճշմարտացի ցուցմունքներ (ՀՀ ՔԴՕ հոդվ. 44, կետ 4) և այլն), այնուհետև՝ օժտված է որոշակի դատավարական իրավունքներով (ցուցմունքները շարադրել գրավոր, օրենքով նախատեսված դեպքերում հրաժարվել ցուցմունքներ տալուց և այլն): Վկան ըստ էության, կատարում է արդարադատության իրականացման օժանդակելու գործառույթ:

2. Վկան անփոխարինելի է: Վկան, ի տարբերություն փորձագետի, ոչ մի հատուկ հետազոտություններ չի կատարում: Նա փաստերի մասին տեղեկությունների կրող դառնում է իրադարձության տեղի ունենալու ժամանակ ներկա գտնվելու կամ այլ կերպ դրան իրազեկվելու եղանակով, ուստի որպես ապացույցի միջոց՝ վկայի ցուցմունքը չի կարող փոխարինվել այլ ցուցմունքներով:

3. Վկան իրավաբանորեն շահագրգռված չէ գործի ելքով. վկան վեճի առարկա նյութաիրավական հարաբերությունների մասնակից չէ և դրանով տարբերվում է գործին մասնակցող անձանցից իր դատավարական կարգավիճակով՝ չունենալով գործով իրավաբանական շահ: Իհարկե, ասվածը չի բացառում, որ վկան ունենա գործի ելքով այլ շահագրգռվածություն, կապված, օրինակ, ընկերական հարաբերությունների, հարազատության, համակրանքի կամ հակակրանքի, աշխատանքային հարաբերությունների և այլնի հետ:

Հեղինակն առաջարկում է վկաներից ցուցմունք վերցնելուց առաջ նրանց նույնպես պարտադրել երդվելը կամ համարժեք այլ հայտարարություն տալը, եթե կրոնական կամ այլ համոզմունքներից ելնելով չեն ցանկանում երդվել:

Երկրորդ գլուխը՝ «Գրավոր և իրեղեն ապացույցները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, նվիրված է ապացույցների երկու հիմնական միջոցներին՝ գրավոր ապացույցներին և վերջիններիս տեսակը համարվող էլեկտրոնային փաստաթղթերին և իրեղեն ապացույցներին՝ այդ թվում իրեղեն ապացույցների և ձայնա-տեսագրությունների կապի ու հարաբերակցության խնդիրներին:

Երկրորդ գլխի առաջին՝ «Գրավոր ապացույցների հասկացությունը և դասակարգումը. էլեկտրոնային փաստաթղթերը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ պարագրաֆում հեղինակը ներկայացնում է գրավոր ապացույցի օրենսդրական ձևակերպումը՝ վեր հանելով վերջինիս հիմնական թերությունները: Մասնավորապես՝ ատենախոսը մեկնաբանելով ՀՀ ՔԴՕ 54 հոդվածի 1-ին կետի ձևակերպումը արձանագրում է, որ այն հնարավորություն չի տալիս հստակ պատկերացում կազմել գրավոր ապացույցի հասկացության մասին: Նշված նորմը չի սահմանում նաև այն չափանիշները, որոնցով գրավոր ապացույցը կարելի է տարբերակել ապացուցման այլ միջոցներից՝ մասնավորա-

պես, իրեղեն ապացույցներից, ինչպես նաև փորձագետի եզրակացությունից, վկայի և գործին մասնակցող անձանց գրավոր ցուցմունքներից:

Ատենախոսը նկատել է, որ գրավոր ապացույցների հստակ սահմանմանը խոչընդոտում է նաև այն, որ գրավոր ձևով կարող են տրվել նաև կողմերի, երրորդ անձանց ցուցմունքները և փորձագետների եզրակացությունները, հետևաբար, արտաքնապես՝ իրենց արտահայտման ձևով, դրանք ոչնչով չեն տարբերվում գրավոր ապացույցներից: Հեղինակի կարծիքով գրավոր ապացույցների սահմանման գործում կարևոր նշանակություն ունի նաև այն սուբյեկտների շրջանակի հստակ տարանջատումը, որոնցից կարող է ելնել գրավոր նյութը. որպես այդպիսին չեն կարող հանդես գալ վկան և փորձագետը, քանի որ նրանց կողմից տրված գրավոր նյութերն ընդգրկվում են ապացույցների այլ տեսակների շարքում, մասնավորապես՝ վկայի ցուցմունքի և փորձագետի եզրակացության: Ինչ վերաբերում է գործին մասնակցող անձից արտադատական կարգով ձեռք բերված գրավոր նյութին, ապա դա կարող է օգտագործվել որպես գրավոր ապացույց, այլ ոչ թե որպես գործին մասնակցող անձի գրավոր ցուցմունք: Ուսումնասիրության արդյունքում հեղինակն առաջարկում է գրավոր ապացույցը բնորոշումը:

Այս պարագրաֆի շրջանակներում հեղինակն անդրադառնում է նաև գրավոր ապացույցների տեսակներին՝ ներկայացնելով, որ գրավոր ապացույցները միմյանցից տարբերվում են իրենց ստեղծմամբ, արտացոլման ձևով, բովանդակությամբ և այլ հատկանիշներով:

Դատավարագետների կողմից ընդունված են գրավոր ապացույցները դասակարգել՝ 1. ըստ բովանդակության՝ տնօրինչական և տեղեկատվական, 2. ըստ ձևի՝ հասարակ գրավոր և նոտարական վավերացմամբ, 3. ըստ կազմավորման եղանակի՝ բնօրինակ և պատճեն, 4. ըստ այն սուբյեկտի, որից ծագում են գրավոր ապացույցները (հեղինակող սուբյեկտ)՝ պաշտոնական և ոչ պաշտոնական:

Բացի այս ընդհանուր դասակարգումից, հեղինակը նկատել է, որ Գերմանիայի, Անգլիայի և Լատինա-ամերիկյան որոշ երկրների քաղաքացիական դատավարության իրավունքում գրավոր ապացույցները դասակարգվում են նաև հանրայինի (հրապարակայինի) և մասնավորի:

Ատենախոսն ուշադրություն է սևեռում այն հանգամանքի վրա, որ այս դասակարգումը չպետք է շփոթել ՀՀ և ՌԴ դատավարագետների կողմից ընդունված պաշտոնական և ոչ պաշտոնական (մասնավոր) դասակարգման հետ, քանի որ այդ բաժանումը պայմանավորված է ոչ միայն գրավոր ապացույցը հեղինակող սուբյեկտով, այլև ձևական պահանջներով: Ընդունված է, որ հանրային գրավոր ապացույցներն ունեն բարձր ապացուցողական ուժ: Օրինակ՝ նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Ուստի, նոտարի վավերացված գրավոր պայմանագիրը, պետք է ունենա ապացուցողական բարձր ուժ, և դատարանը պարտավոր է վստահել այդ գործարքի գոյությանը (բացառությամբ, երբ վիճարկվում է հենց այդ գործարքը):

Ըստ գրավոր ապացույցների հանրային դասակարգման կանոնի՝ օրինակ, դատարանը չի կարող գործին մասնակցող անձին համարել մահացած, եթե չի ներկայացվում նրա մահվան փաստը հաստատող ՔԿԱԳ մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթուղթը (բացառությամբ հատուկ վարույթի գործերի, երբ դիմումի առարկան է անձին մահացած ճանաչելը): Հետևաբար,

մասնավոր գրավոր ապացույցները (օրինակ՝ մահացած անձի գործատու կազմակերպության տեղեկանքը, ՀՀ ոստիկանության գրությունը) չեն կարող մահվան փաստի հաստատման միջոց ծառայել: Վերոհիշյալ դասակարգման առանձնահատկությունից ելնելով՝ հեղինակն առաջարկում է լրացում կատարել ՀՀ ՔՂՕ-ում:

Գրավոր ապացույցների համատեքստում ատենախոսը առանձնակի ուշադրության է արժանացնում էլեկտրոնային եղանակով ստացված փաստաթղթերի ձեռքբերման և հետազոտման կարգի առանձնահատկություններին՝ նկատելով, որ համակարգչային տեխնիկայի և թվային տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից պայմաններում կարևոր նշանակություն է ձեռք բերում էլեկտրոնային գրությունների կամ կապի այլ միջոցներով ձեռք բերված գրավոր նյութերի իրավական նշանակությունը և ապացուցողական արժեքը դատավարության բոլոր տեսակներում:

Հեղինակը նշում է, որ ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությունը առանձին իրավական կարգավորումներով չի անդրադարձնում համակարգչի օգնությամբ ձեռք բերված ապացույցներին այն դեպքում, երբ համակարգչային տեղեկատվությունն այսօր ներխուժել է հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր բնագավառները: Համակարգչային տեխնիկան անսահմանափակ հնարավորություններ է տալիս ոչ միայն ստանալ գրավոր ապացույցներ, այլ նաև կեղծել դրանք:

Հեղինակը ներկայացնելով իրավաբանական գրականության մեջ արտահայտված հակասական կարծիքները էլեկտրոնային փաստաթղթերի տեղի և դասակարգման վերաբերյալ, այնուամենայնիվ, հարում է այն մոտեցմանը, որ էլեկտրոնային փաստաթղթերը կարելի է դիտել որպես գրավոր ապացույցի առանձին տեսակ՝ միևնույն ժամանակ վերջիններս ատենախոսի համոզմամբ ենթակա են առանձին, ինքնուրույն իրավական կարգավորման գրավոր ապացույցների քաղաքացիա-դատավարական կարգավորման շրջանակներում:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Իրեղեն ապացույցների հասկացությունը և առանձնահատկությունները. իրեղեն ապացույցների և լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների կապն ու հարաբերակցությունը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ պարագրաֆում հեղինակը ներկայացրել է ՀՀ ՔՂՕ 56 հոդվածով տրված իրեղեն ապացույցների բնորոշումը, համեմատելով վերջինիս գիտական բնորոշման հետ՝ անդրադարձնալով նաև տարբեր երկրներում և տարբեր գիտնականների կողմից ներկայացվող սահմանումներին:

Հեղինակը ներկայացված ինստիտուտը վերլուծելիս՝ հատկապես մեծ ուշադրություն է դարձրել լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները իրեղեն ապացույց համարելու հարցին՝ նկատելով, որ գիտատեխնիկական նոր նվաճումները և տեղեկատվական տեխնոլոգիաների ու համակարգչային տեխնիկայի զարգացմանը զուգահեռ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեսա, ձայնա և լսողական սարքերի լայն կիրառումը ընդլայնում են լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների կիրառման հնարավորությունները քաղաքացիական դատավարությունում: Հետևաբար, հասարակական կյանքի այս բնագավառի իրավական կարգավորումն այսօր օրենսգրքի մակարդակով ժամանակի հրամայականն է: Հեղինակը քննադատել է ձայնա-տեսագ-

րություններն իրեղեն ապացույցների շարքին դասելու օրենսդրի մոտեցումը հետևյալ տեսանկյուններից՝

1. իրեղեն ապացույցների հետազոտումը տարբերվում է ձայնա-տեսագրությունների հետազոտումից: Մասնավորապես՝ ապացույցների հետազոտումն իրենից ներկայացնում է դատավարական այնպիսի գործողությունների համակցություն, որոնք ուղղված են դատարանի և գործին մասնակցող անձանց կողմից գործով հավաքված ապացույցների անմիջական ընկալմանը և դրանց բովանդակության, այսինքն՝ փաստական տվյալների (փաստերի մասին տեղեկությունների) վերհանմանը: Իրեղեն ապացույցի հետազոտության միջոց է հանդիսանում դրանց գնումը: Ձայնա-տեսագրությունները հետազոտման դեպքում անհրաժեշտ են հատուկ տեխնիկական միջոցների և սարքավորումների կիրառում, ինչը հնարավոր է միայն տեխնիկական միջոցներով վերծանման դեպքում: Այսինքն՝ ի տարբերություն իրեղեն ապացույցների՝ ձայնա-տեսագրությունների վրա համապատասխան «հետքերն» առաջանում են այդ նպատակի համար հատուկ նախատեսված տեխնիկական միջոցների կիրառմամբ, առանց որոնց ձայնա-տեսագրությունների առաջացման հնարավորությունը բացառված է: Նույն կերպ՝ ընկալման համար լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների վրա առկա հետքերի վերարտադրությունը հնարավոր է միայն և միայն համապատասխան տեխնիկական սարքերի կիրառման պարագայում: Հեղինակն անդրադարձել է նաև իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն մոտեցմանը, որ լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները կարող են դասվել գրավոր ապացույցներին շարքին՝ համարելով այս մոտեցումը նույնպես ոչ իրավաչափ:

2. Լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների ձեռք բերման, դատարան ներկայացման և թույլատրելիության որոշման կարգը տարբերվում է իրեղեն ապացույցների ձեռք բերման, ներկայացման և թույլատրելիության իրավահարաբերություններից: Այս տեսանկյունից հեղինակը կարևորել է մարդու անձնական (մասնավոր) և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու պահանջը ձայնատեսագրությունները ձեռքբերման գործընթացում՝ անդրադարձնալով անձնական և ընտանեկան կյանքի հարգման սահմանադրաիրավական պահանջին և ՄԻԵԴ դատական ակտերին:

Երրորդ գլխում՝ «Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, հեղինակը ներկայացրել է փորձաքննության ինստիտուտը, վերջինիս առանձնահատկությունները, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման ապացուցողական նշանակության հարցերը:

Երրորդ գլխի առաջին՝ «Փորձաքննության հասկացությունը և դրա հիմնական առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ պարագրաֆում հեղինակը անդրադարձել է այն խնդրին, որ քաղաքացիական գործերով շատ դեպքերում դատական ապացուցման գործընթացում դատարանը կամ գործին մասնակցող անձինք առնչվում են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի ոլորտին վերաբերող այնպիսի հարցերի հետ, որոնք նրանք չեն կարող սեփական գիտելիքների օգնությամբ մեկնաբանել: Ուստի, ծագում է փորձաքննություն նշանակելու (կատարելու) անհրաժեշտությունը՝ համապատասխան հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու և այն դատարանում որպես ապացույց օգտագործելու համար: Դրան

գուզահեռ հեղինակն արձանագրել է, որ ՀՀ ՔԴՕ-ի շրջանակներում փորձաքննության հարաբերությունները լիարժեք կարգավորված չեն: Այն է՝ ՀՀ ՔԴՕ 60 հոդվածի 1-ին մասը ընդամենը սահմանում է, որ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել: Հեղինակի համոզմամբ այս նորմի բովանդակությունը լիարժեք չէ և չի արտահայտում փորձաքննության հիմնական էությունն ու բովանդակությունը: Հետևաբար, խնդիրը կարող է կարգավորվել, եթե օրենսդիրը նշի հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի բնագավառները:

Ատենախոսը ուշադրության արժանի խնդիր է համարել նաև արտադատական կարգով կատարվող փորձաքննությունների իրավական կարգավորումը: Դատական փորձաքննության դատավարական ձևի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն իրականացվում է քաղաքացիա-դատավարական օրենքով սահմանված կարգով դատարանի որոշմամբ նշանակված դատավարական համապատասխան կարգավիճակ ունեցող անձի՝ փորձագետի կողմից, դատավարական օրենքով սահմանված ընթացակարգով: Բացի այդ, փորձագետը նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր. օր. 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Փորձագետի-մասնագետի եզրակացությունը, որը ստացվել է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգավորման շրջանակներից դուրս, չի կարող ունենալ փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակի կարգավիճակ, քանի որ այդպիսի փորձաքննություն իրականացրած անձինք չունեն փորձագետի կարգավիճակ այդ բառի դատավարական իմաստով, չունեն այն իրավունքները և պարտականությունները, որոնք փորձագետի համար նախատեսված են դատավարական օրենքով և չեն նախազգուշացվել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Ուստի, այդպիսի փորձաքննության արդյունքը դատարանը չի կարող ընդունել որպես փորձագետի եզրակացություն:

Միևնույն ժամանակ գործնականում փորձաքննություններ իրականացվում են նաև արտադատական կարգով և բազմաթիվ են այնպիսի դեպքերը, երբ հայցադիմումին կից կամ գործի դատական քննության ընթացքում կողմը դատարան է ներկայացնում նաև «փորձագետի եզրակացություն», որը ձեռք է բերել ինքնուրույն, առանց դատարանի որոշման, ուստի և համապատասխան փաստաթղթի գնահատման խնդիր է առաջանում: Այս տեսանկյունից հեղինակը ներկայացրել է ՀՀ դատական պրակտիկան և նաև անդրադարձել արտասահմանյան երկրների փորձին:

Հեղինակը գտնում է, որ արտադատական կարգով իրականացված փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացությունը կարող է ապացուցողական նշանակություն ունենալ միայն այն դեպքում, երբ դատարանը փորձաքննություն կատարած անձին հրավիրում է դատական նիստին, ստուգում է վերջինիս որակավորումը և նախազգուշացնում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Այս մոտեցումն իրագործելու համար անհրաժեշտ է ՀՀ ՔԴՕ-ում կատարել համապատասխան փոփոխությունները:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Փորձագետի եզրակացությունը որպես դատական փորձաքննության արդյունք. փորձագետի եզրակացության գնահատումը և դրա ապացուցողական նշանակությունը» վերտառությամբ պարագրաֆում հեղինակն անդրադարձել է փորձաքննության նշանակման իրավական և փաստական հիմքերին՝ փորձաքննություն նշանակելու փաստական հիմք համարելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտությունը, իսկ իրավական հիմք՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշումը:

Ատենախոսը նկատել է մի շարք իրավական բացեր և չկարգավորված հարաբերություններ, որոնցից կարևորել է հատկապես հետևյալը՝

1. Ինչպե՞ս պետք է կատարվի փորձագետի ընտրությունը: Այս խնդրի շուրջ հեղինակը համադրել է ՀՀ օրենսդրի մոտեցումը տարբեր երկրների փորձի և գիտնականների մոտեցումների հետ՝ հանգելով այն եզրակացության, որ ՀՀ Ք-ԴՕ 45 հոդվածի կարգավորումը այն մասին, որ դատարանում որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում ունեցող և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով դատարանի կողմից նշանակվող անձը, թերի է:

Հեղինակն անհրաժեշտ է համարում ընդլայնել և հստակեցնել փորձագետին ներկայացվող պահանջները՝ միայն որակավորում ունենալու ներկա օրենսդրական պահանջը փոխարինելով համապատասխան որակավորում, կրթություն, ունակություն, հմտություն կամ փորձ ունենալու պահանջներով:

2. Ի՞նչ ժամկետներում պետք է իրականացվի փորձաքննությունը: Հեղինակը նկատել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարական օրենսդրությամբ փորձաքննության կատարման ժամկետներ նախատեսված չեն: Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձաքննության իրականացման ժամկետների սահմանման ինստիտուտը տարածված է նաև արտասահմանում: Հեղինակն ընդունելի է համարել Գերմանիայի և Ֆրանսիայի մոտեցումը, որտեղ օրենսդիրը ևս գնացել է փորձաքննության ժամկետ սահմանելու ուղղությամբ՝ ամրագրելով, որ դատարանի կողմից սահմանվում է փորձաքննության կատարման ժամկետ, որը փորձագետի կողմից խախտվելու դեպքում նա կարող է տուգանվել, իսկ այդ ժամկետների կրկնակի խախտման դեպքում փորձագետը կարող է տուգանվել կրկնակի անգամ:

Անդրադառնալով ՀՀ դատական պրակտիկային՝ հեղինակը նկատել է, որ դատարանները, որպես կանոն, փորձաքննության իրականացումը հանձնարարում են ՀՀ ԱՆ «Փորձագիտական կենտրոն» կամ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ներին: Նշված փորձագիտական հաստատությունների կողմից շատ դեպքերում օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով փորձաքննությունների կատարումը ձգձգվում է, ինչի հետևանքով խախտվում է ողջամիտ ժամկետներում գործի քննության օրենսդրական պահանջը: Խնդրի լուծումը հեղինակի համոզմամբ կլինի դատարանին փորձաքննության կատարման ժամկետ սահմանելու իրավասություն վերապահելը, որը հնարավորություն կտա դատարանին, ելնելով պարզաբանման ենթակա հարցերի բարդությունից, փորձաքննության ներկայացվող նյութերի ծավալից, դատարանի և փորձագիտական կազմակերպության ծանրաբեռնվածությունից, որոշել փորձաքննության կատարման ողջամիտ ժամկետներ՝ դրանով իսկ ապահովելով նաև կողմի՝ գործն արդարացի, ողջամիտ ժամկետներում քննելու իրավունքի արդյունավետ իրականացումը:

Եզրակացության մեջ ամփոփվում են կատարված հետազոտության արդյունքները և առանձնացվում են որոշակի նկատառումներ, որոնք հեղինակի կարծիքով պետք է հաշվի առնվել նաև օրենսդրության կատարելագործման աշխատանքներում: Մասնավորապես՝

1. Գործին մասնակցող անձանց բացատրությունները և ցուցմունքները անհրաժեշտ է տարանջատել միմյանցից, քանի որ բացատրությունները չեն հանդիսանում ապացուցման միջոց (ապացույց): Առաջարկվում է հստակ տարանջատել ցուցմունքի և բացատրության ինստիտուտները և բնորոշել բացատրությունը որպես գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած պարզաբանում գործի փաստերի և/կամ իրավունքի վերաբերյալ: Ընդ որում նախատեսվում է բացատրությունը ի տարբերություն ցուցմունքի չհամարել ապացույց (ապացուցման միջոց):

2. Միայն քրեական պատասխանատվության սպառնալիքը գործնականում բավարար չէ գործին մասնակցող անձանց կամ վկաների ցուցմունքների ճշմարտացիությունը ապահովելու համար, ինչն օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջացնում ներմուծել երդման ինստիտուտը: Առաջարկվում է ներմուծել երդման ինստիտուտը նախատեսելով ցուցմունք տալուց առաջ երդում տալու պարտականություն գործունակ վկայի և գործին մասնակցող անձի համար, բացառությամբ կրոնական կամ այլ համոզմունքների պատճառով երդվել չցանկացող անձանց՝ համարժեք այլ հայտարարություն անելու պայմանով:

3. ՀՀ ՔԴՕ-ում գործին մասնակցող անձանց խոստովանության ինստիտուտը լիարժեք կարգավորված չէ, ինչը չի նպաստում դատական քննության արդյունավետ իրականացմանը: Առաջարկվում է ներմուծել խոստովանության ինստիտուտը՝ սահմանելով, որ գործին մասնակցող անձի կողմից հակառակ կողմի գործին մասնակցող անձի վկայակոչած փաստն ընդունող ցուցմունքը (խոստովանությունը) արձանագրվում է և ստորագրվում է ցուցմունք տվող գործին մասնակցող անձի կողմից: Նախնական դատական նիստի ժամանակ տրված խոստովանությունն ընդունելու կամ ընդունումը մերժելու վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում, որտեղ նշվում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը անվիճելի համարելու կամ ընդունումը մերժելու մասին: Խոստովանության առարկա փաստերը դատարանի միջանկյալ դատական ակտով ընդունվելու պահից համարվում են անվիճելի փաստեր:

4. Քաղաքացիական գործերով դատարանները գործին մասնակցող անձանց փոխարեն ցուցմունքներ են վերցնում նրանց ներկայացուցիչներից, մինչդեռ ներկայացուցիչները չեն կարող ապացույցի աղբյուր հանդիսանալ և ցուցմունքներ տալ: Առաջարկվում է իրավական կարգավորում սահմանել այն մասին, որ գործին մասնակցող անձանց ներկայացուցիչները չեն կարող ցուցմունք տալ իրենց վստահորդների փոխարեն:

5. ՀՀ ՔԴՕ-ում գրավոր ապացույցների հասկացությունը լիարժեք սահմանված չէ, ինչի հետևանքով գրավոր ապացույցները այլ ապացույցներից տարանջատելու հարաբերություններում, կարող են տարընկալումներ առաջանալ, օրինակ՝ փորձագետի եզրակացությունից կամ գործին մասնակցող անձի ցուցմունքից: Առաջարկվում է գրավոր ապացույցը բնորոշել որպես թղթային, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված և անձի կամքն արտահայտող ցանկացած բովանդակային գրառում, ո-

րով կարող է հաստատվել կամ ժխտվել քաղաքացիական գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը, բացառությամբ գործին մասնակցող անձի և վկայի կողմից գրավոր ձևով տրված ցուցմունքի և փորձագետի գրավոր եզրակացության:

6. Քաղաքացիական դատավարությունում հանդիպում են գրավոր ապացույցների այնպիսի տեսակներ, որոնք առաջացել են հանրային իրավունքի ոլորտում, ունեն որոշակի ձև, կառուցվածք, վավերապայմաններ և ստեղծվել են պաշտոնատար անձանց կողմից օրենքով նախատեսված որոշակի լիազորությունների իրականացման շրջանակում: Սակայն գրավոր ապացույցների այդպիսի դասակարգում ՀՀ ՔԴՕ-ում առկա չէ, ինչի արդյունքում հանրային և մասնավոր փաստաթղթերն ունեն հավասար իրավաբանական ուժ: Առաջարկվում է գրավոր ապացույցները դասակարգել հանրայինի և մասնավորի՝ հանրային համարելով պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի (այդ թվում՝ վարչական մարմնի) կամ դրանց պաշտոնատար անձի, ինչպես նաև հանրային ծառայություններ իրականացնող անձի կողմից իր լիազորությունների իրականացման սահմաններում տրված այն փաստաթուղթը, որը պարունակում է այդպիսի փաստաթղթի համար օրենքով նախատեսված անհրաժեշտ վավերապայմանները, իսկ մասնավոր համարելով հանրային չհանդիսացող մյուս գրավոր ապացույցները:

7. Քաղաքացիական դատավարությունում հաճախ են հանդիպում էլեկտրոնային փաստաթղթեր, որոնց առանձնահատկությունների վերաբերյալ ՀՀ ՔԴՕ-ն որևէ իրավական կարգավորում չի սահմանել: Առաջարկվում է էլեկտրոնային փաստաթղթերը սահմանել որպես գրավոր ապացույցների առանձին ենթատեսակներ և ենթարկել առանձին, ինքնուրույն իրավական կարգավորման գրավոր ապացույցների քաղաքացիա-դատավարական կարգավորման շրջանակներում՝ հաշվի առնելով էլեկտրոնային ապացույցների առանձնահատկությունները:

8. ՔԴՕ-ն լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները դասելով իրեղեն ապացույցների շարքին հաշվի չի առել այդ ապացույցների առանձնահատկությունները՝ դրանց բնույթի, ստեղծման, ներկայացման և հետազոտության տեսանկյունից: Առաջարկվում է լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները դիտարկել որպես ինքնուրույն ապացույցներ և դրանք տարանջատել իրեղեն ապացույցներից՝ ենթարկելով առանձին իրավական կարգավորման:

9. ՀՀ ՔԴՕ-ն չի սահմանել այն բնագավառները, որոնց շրջանակում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով կարող է նշանակվել փորձաքննություն, ինչը իրավական անորոշություն էր ստեղծում փորձաքննության ինստիտուտը կիրառելիս: Առաջարկվում է հստակեցնել փորձաքննության նշանակման համար անհրաժեշտ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի բնագավառները՝ առանձնացնելով գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ բնագավառները:

10. ՀՀ ՔԴՕ-ն չի նախատեսում օտարերկրյա իրավունքի հարցով փորձաքննություն հնարավորությունը, մինչդեռ դատարանները, հատկապես վերջին տարիներին հաճախ են առնչվում միջազգային մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճերի, երբ պետք է կիրառվի այլ պետության օրենսդրությունը: Այս պայմաններում, ողջամիտ չէ դատարանի վրա դնել օտարերկրյա իրավունքի ի-

մացության պարտականությունը: Առաջարկվում է ՔՂՕ-ում կատարել որոշակի փոփոխություններ և հնարավոր համարել օտարերկրյա իրավունքի հարցով փորձաքննության նշանակումը:

11. Քաղաքացիական դատավարությունում հաճախ են հանդիպում գործին մասնակցող անձի կողմից արտադատական կարգով ձեռք բերված մասնագիտական կարծիքներ, որոնց գնահատման հարցում դատական համակարգը միատեսակ մոտեցում չունի: Պայմանավորված դատարանի հայեցողությամբ, այն մի դեպքում համարվում է գրավոր ապացույց, մյուս դեպքում՝ փորձագետի եզրակացություն, այն պարագայում, երբ երկու մոտեցումներն էլ թերի են: Այդ կարծիքը, գրավոր ապացույց չի կարող հանդիսանալ, քանի որ փաստի մասին տեղեկություն չի պարունակում, իսկ փորձագետի եզրակացություն չի կարող հանդիսանալ, քանի որ այն կազմած անձը չի ներգրավվել դատարանի կողմից, որպես փորձագետ, և չի նախազգուշացվել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Առաջարկվում է որոշակի դեպքերում թույլատելի համարել արտադատական կարգով ձեռք բերված փորձագետի եզրակացությունը:

12. ՀՀ ՔՂՕ-ն փորձագետի թեկնածուին ներկայացվող միակ պահանջը համարել է վերջինիս որակավորում ունենալը, անհարկի նեղացնելով որակավորման չունեցող, սակայն հատուկ գիտելիքներին տիրապետող անձանց, որպես փորձագետ ներգրավելու հնարավորությունը, օրինակ՝ որակավորում չպահանջող արհեստի բնագավառում: Առաջարկվում է սահմանել, որ դատարանում, որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում, կրթություն, ունակություն, հմտություն կամ փորձ ունեցող գործունակ ֆիզիկական անձը:

13. ՀՀ ՔՂՕ-ն դատարանի համար չի սահմանել փորձաքննության կատարման ժամկետ նախատեսելու իրավասություն, ինչը փորձաքննության կատարման ժամկետները դարձնում է անվերահսկելի: Մինչդեռ, փորձաքննության կատարման ոչ ողջամիտ ժամկետների պատճառով խախտվում է անձի՝ ողջամիտ ժամկետում իր գործի դատաքննության իրավունքը: Առաջարկվում է սահմանել փորձաքննության իրականացման ժամկետ և պատասխանատվություն այդ ժամկետը խախտող փորձագետի համար՝ նախատեսել դատարանի համապատասխան իրավասությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Իրավաբանական փաստ, ապացույց և ապացուցման միջոց//Օրենք և Իրականություն, Երևան, 2009, N 6 (164), էջեր 20-27 :

2. Գործին մասնակցող անձի ցուցմունքը//Օրենք և Իրականություն, Երևան, 2009, N 9 (167), էջեր 10-14:

3. Փորձաքննության հասկացությունը և դրա հիմնական առանձնահատկությունները քաղաքացիական դատավարությունում//Օրենք և Իրականություն, Երևան, 2011, N 8 (190), էջեր 27-30:

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ СРЕДСТВ ДОКАЗЫВАНИЯ В ГРАЖДАНСКОМ
ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Кандидатская диссертация относится к основным вопросам средств доказывания в гражданском процессе Республики Армения.

Актуальность темы диссертации связано с рядом факторов, основным из которых является соответствие института доказательств научно-техническому прогрессу, восполнения пробела в праве, которое является одним из первых условий, с точки зрения возможности реализации права на справедливое судопроизводство.

В конце концов, тема актуальна так же принимая во внимание сформировавшуюся судебную практику в Республики Армения, в частности, с точки зрения применения института представительства. Тема актуальна так же с чисто научной точки зрения, например, сегодня не законодатель, и не отечественная процессуальная наука не определяют характеристику объяснения, в результате чего два совершенно разных института показаний и объяснений несправедливо сливаются, создавая и правовую и научную неопределенность.

В рамках диссертации были рассмотрены виды доказательств, представлены соотношения письменных и вещественных доказательств, фотографий, аудиозаписи и видеозаписи, заключения эксперта и оценку последнего.

Автор обратился так же к таким средствам доказывания, которые не имеют применения в РА, хотя, в настоящем являются требованием времени. Как таковой, автор представил возможность назначения экспертизы по вопросам зарубежного права, институт оценки заключения эксперта, полученного в внесудебном порядке и т.д.

Особенно ценны подходы автора с точки зрения сходства и различия институтов объяснений и показаний: Учитывая практику, автор предложил дать определение объяснения и не считать последнее доказательством.

Автор предложил считать недопустимым показание представителя лица, участвующего в деле, поскольку представитель не является источником доказывания.

Научная новизна диссертации является то, что в науке гражданско-процессуального право РА на уровне монографии было осуществлено систематическое и всестороннее исследование, посвященное вопросам средств доказывания.

Автор представил такие новые институты, как определение сроков проведения экспертизы со стороны суда, дача присяги со стороны лиц, участвующих в деле, или свидетелей перед дачей показаний, применил новейший подход в отношении аудио-видео записи, которые законодатель зачислил в ряд вещественных доказательств.

Автор считает, что при определении срока экспертизы, не будут нарушаться право лица на рассмотрение своего дела в разумные сроки, а институт присяги будет способствовать получению правдивых показаний по делу.

По мнению автора, фотографии, аудиозаписи и видеозаписи должны отделяться от вещественных доказательств, поскольку данные доказательства по своей сути, и вещественные и личные, а так же, имеют особенности изучения.

В то же время в диссертации был представлен огромный объем материалов из судебной и экспертной практики.

Диссертация имеет так же важное теоретическое и практическое значение, так как подходы, выводы и рекомендации, представленные в диссертации, пополняют научный потенциал науки гражданско-процессуального право и теории доказательств, и могут применяться в правотворческой сфере, для усовершенствования положений гражданско-процессуального законодательство.

Структура диссертации соответствует целям и задачам исследованию. Диссертация была проведена по объему, определенным Высшей аттестационной комиссией (ВАК), и состоит из введения, трех глав, которые включают семь параграфов, заключения, списка использованных нормативно-правовых актов, и списка литературы.

ZOHRABYAN ARA GAGIK

**MEANS OF PROOF IN THE CIVIL
PROCEDURE OF
THE REPUBLIC OF ARMENIA**

RESUME

The thesis is related to the means of proof in the RA civil procedure.

Contemporariness of the topic of thesis is conditioned with a number of aspects out of which the basic is complying institute of evidences to the science and technology progress, completing gaps in legislation which is one of the initial preconditions in the light of implementing right of fair trial.

Finally, the topic is contemporary also in consideration of judicial practice of the Republic of Armenia, in particular, in the light of application of institute of representatives.

The topic is contemporary also in the light of science, for example, nowadays neither legislator nor national procedure science define characteristics of explanation as a result of which different institutions of testimony and explanation get unified unfairly by creating legal and scientific uncertainty.

Types of testimonies were studied in the scope of thesis, written and exhibit proofs, audio-video tapes, expert opinion and assessment relations of the later were introduced in writing.

The author referred also to such means of proof which do not have application in the RA and are considered as requirement of time.

The author introduced possibility of appointing expertise in foreign law matters, assessment institute of expertise opinion obtained extra judicially, etc.

In particular, the author's approach to the institutes of explanation and testimonies are valuable as well as in the context of impermissibility of identifying party of the case and representative of the party.

The author proposed to give definition of explanation and not consider it as means of proof taking into account the practice.

The author proposed not to consider evidence of the representative of the party to the case permissible as the representative is not considered to be source of proof.

Scientific novelty of thesis is that systemic and comprehensive survey was completed in the monographic level of the RA civil procedure law dedicated to the means of proof.

The author presented such new institutions as defining period for conducting expertise by the court, swearing before giving testimony by the parties and witnesses, moreover, new approach was revealed in respect to audio-video tapes which the legislator classified in the list of evidences.

The author finds that if period of expertise is defined, it will not violate the individual's right to fair trial within a reasonable period and institute of swear will support in obtaining trustworthy testimonies.

Per author's opinion pictures, recordings and videos shall be separated from real evidences as these evidences are both real and personal. They have peculiarity in the process of investigation also.

Meantime, huge amount of materials from judicial and expertise practice were introduced in the thesis.

The author analyzed also such unprecedented institution as assessment of professional opinion obtained extra- judicially.

The author introduced possibility of appointing expertise in foreign law matters, assessment institute of expertise opinion obtained extra judicially, tendency of dividing audio-video tapes from evidences(exhibit) and etc.

The thesis has also important theoretical and practical significance such as approaches, conclusions and proposals introduced in the thesis complete scientific potential in the civil procedure science and theory of evidences and can be applied in the legislative activity for improving provisions of the RA civil procedure law.

Structure of the thesis complies with the objectives and issues of the survey. The thesis was performed in accordance with the volume defined by the Supreme Certification Commission (SCC) of the RA and is composed of introduction, three chapters which include seven paragraphs, opinion and list of normative legal acts and literature.